Պարույր Սևակ

Անհետ կորածը

Գրեցին, որ նա անհետ կորել է:
-Ինչպե՞ս թե... - ոչ ոք չհարցրեց այնժամ:
Ժամանակը՝ խառն, ծանրը՝ օրերը,
Հասկանալի էր այդ միտքը դաժան:
Իսկ հիմա դա չար կատակ է թվում.
-Ինչպե՞ս թե անհետ,- ուզում ես գոռալ:
Երբ արկերը մեզ է՛լ չեն վրդովում,
Կրակ չի թափվում մեր հողի վրա.
Երբ շենք չի քանդվում, տուն չի փուլ գալիս,
Որդին չի զոհվում, մայրը չի լալիս.
Երբ հրդեհները արտը չեն այրում,
Երբ առանց քողի՝ լույսերն են փայլում.
Երբ հուշ է դարձել գրքույկը հացի,
Երբ կյանք չեն կշռում նամակ ու բացիկ.
Երբ հին զինվորը հնձվոր է այսօր,
Երբ իմ աշխարհի երանգը բոսոր
Իր գույնն է տվել աշխարհի կեսին.
Երբ հողագնդի տանջված երեսին
Հույսի, հաղթության ժպիտն է շողում.
Երբ մեր թշնամին ցրտի՛ց չի դողում,
Այլ չարությունի՛ց, անզորությունի՛ց,

Իմ մեծ աշխարհի անդորրությունի՛ց,-
-Ինչպե՞ս թե անհետ,- ուզում ես գոռալ,-
Ով՝ ով, բայց նրանք անհետ չկորան...

09.II.1947թ.
Երևան